**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» փետրվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՂ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Մալխասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի փետրվարի 16-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Քարթրիջների լիցքավորում՝ առանց տոների, ներառյալ պահեստամասերը | 180 000 |
| 2. | Քարթրիջների լիցքավորում՝ առանց տոների, ներառյալ պահեստամասերը | 90 000 |
| 3. | Քարթրիջների լիցքավորում, ներառյալ գունավոր տոները, ներառյալ պահեստամասերը | 50 000 |
| 4. | Լազերային տպիչների վերանորոգում, ներառյալ պահեստամասերը | 800 000 |
| 5. | Պատճենահանող և բազմաֆունկցիոնալ սարքերի վերանորոգում, ներառյալ պահեստամասերը | 1 050 000 |
| 6. | Գունավոր լազերային տպիչների վերանորոգում, ներառյալ պահեստամասերը | 70 000 |
| 7. | Մոնիտորների վերանորոգում, ներառյալ պահեստամասերը | 200 000 |
| 8. | Սկաներների վերանորոգում, ներառյալ պահեստամասերը | 50 000 |
| 9. | Համակարգիչների վերանորոգում | 1 200 000 |
| 10. | Նոութբուքերի վերանորոգում | 200 000 |
| 11. | Սերվերների վերանորոգում | 560 000 |
| 12. | Դատական համակարգի նիստերը ցուցադրող տեղեկատվական մոնիտորների վերանորոգում | 200 000 |
| 13. | Օդորակիչների վերանորոգում | 1 000 000 |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն |
|---|---|
| «Ստարտկոպի» ՍՊԸ | ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբանցք, 3-րդ շենք, բն. 15 |
| «Բնեռային ուղի» ՍՊԸ | ք. Երևան, Մանանդյան 25 շ., բն. 6 |
| «Այ Սերվիս» ՍՊԸ | ք. Երևան, Հ. Հակոբյան 3 |
| «ՍեԳ» ՍՊԸ | ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18 |
| Ա/Ձ «ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ ՄԱՅԻՍԻ» | ք. Երևան, Բաբաջանյան 28 շ., 26 բն. |
| ԱՁ «ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» | Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14 |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հատագա գնահատման համար ընդունելի:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2018թ. փետրվարի 19-ին, ժամը՝ 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Սարգիս Մալխասյան

Արուս Խաչատրյան